ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԱԳԻԿ ԵՆԳՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 362-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Գագիկ Ենգոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2025 թվականի նոյեմբերի 3-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Գագիկ Ենգոյանի (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Ավետիք Բեժանյան) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթի իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները»:

2. Ներկայացնելով թիվ ՀԿԴ/0094/02/24 հակակոռուպցիոն քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորմանն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները չեն համապատասխանում Սահմանադրության 61, 63, 75 և 79-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ ՀՀ դատարանները վիճարկվող դրույթը մեկնաբանելիս դրանում առկա «հրապարակման օրվանից» եզրույթը մեկնաբանում են այնպես, որ դա հասկացվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում դատական ակտի գեներացման օրը: Մինչդեռ ըստ Դիմողի՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգը միմիայն տեղեկատվական հարթակ է և իր նշանակությամբ չի կարող փոխարինել դատական իշխանության պաշտոնական կայքին՝ court.am–ին, որտեղ սույն գործով վճիռը հրապարակված չէ:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասում առկա «հրապարակման օրվանից» եզրույթը բավարար չափով որոշակի չէ, և տարակարծության առիթ է հանդիսանում այն հանգամանքը, թե ինչպե՞ս պետք է դրսևորվի դատական ակտի պատշաճ հրապարակումը. «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով, դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով, դատավարության կողմին ուղարկելու, թե՞ որևէ այլ կերպ վերջինիս հասանելի դարձնելու եղանակով:

Ըստ Դիմողի՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում արված հրապարակումը չի կարող փոխարինել դատական իշխանության պաշտոնական կայքում արված հրապարակմանը: Հակառակ պարագայում, ըստ Դիմողի՝ կստացվի, որ դատական ակտը տեղեկատվական այլ հարթակներում (ՋԼՄ-ներ, սոցիալական կայքեր և այլն) հրապարակելը նույնպես կարող է մեկնաբանվել որպես պատշաճ հրապարակում:

Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթի անորոշ ձևակերպումը հակասում է Սահմանադրության 75 և 79-րդ հոդվածներին այն առումով, որ չի պարունակում բավարար որոշակիություն և ըստ այդմ՝ չի ապահովում իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական ընթացակարգեր:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթն անձանց զրկում է իրենց իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից և ստեղծում գործի արդարացի քննությունն ապահովելու անհնարինության վտանգ, որպիսի պայմաններում վիճարկվող նորմը հակասում է նաև Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին:

Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրվել է Սահմանադրության 61, 63, 75 և 79-րդ հոդվածներին հակասող մեկնաբանություն, ինչի հետևանքով խախտվել են իր՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ սահմանվում են այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը****, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(…) Բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (դրույթների) սահմանադրականության գնահատման հարցեր**:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով **Դիմողը, ձևականորեն վիճարկելով** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) **սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողն **իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ՀԿԴ/0094/02/24 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակության առնչությամբ:** Մասնավորապես՝ Դիմողը վիճարկվող՝ **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են **խնդրո առարկա հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով Դիմողի բարձրացրած հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ խնդրո առարկա հակակոռուպցիոն քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Գագիկ Ենգոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

9 դեկտեմբերի 2025 թվականի
ՍԴԱՈ-188